

11703

ԳՈՐԾՎԱԿՆ ԼՈՒԾՎՈՐՈՒԹՅԵՆ ԳԼԽԱՅԻ ՎՐԵՇՈՒԹՅՈՒՆ

№2 ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՍԵՐԻԱ №2

ԱՆ. ՀՈՎԿՅԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ  
ԶԵՂՆԱՐԿ

025  
7-88

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ-1929

22 MAY 2009

Հ-88  
523

ՔԱՂԱՔԱՆ ԼՈՒՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿԼԻՖԼԱ ՎԵՐՏՈՒԹՅԱՆ

№2 ԳՐԱԴԱՐԱՆԱՑԻՆ ՍԵՐԻԱ №2

ԱՆ ՀՈՎՎՅԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԱՑԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ  
ԶԵՌՆԱՐԿ

(Ցանության կլասիֆիկացիայի աղյուսակով մինչեւ  
6 նազար կտր զիրք ունեցող գրադարանների համար)

ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ—1929



14 JUN 2013


11703

## ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱ

Այն բոլոր կանոնները, վորով կատարվում են գրադարանի գրքերի ցուցակագրությունը, դասավորումը, ընթերցողների բաժանորդագրությունը, գրադարանի կատարած աշխատանքների հաշվառումը և այլն, կոչվում ե գրադարանային տեխնիկա:

Գրադարանային տեխնիկայի միջոցով 1) հաշվառման և ինթերկվում գրադարանային ամբողջ գրքային գույքը (ինվենտար մատքան), 2) գրքերը կարգավորվում են այնպես, վորպեսզի գրադարանը միշտ կարողաւա տալ այս կամ այն պահանջած հեղինակի գրական գործը, իերբ պահանջողը տալիս և գրադարանին իր պահանջած գրքի հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը (այբուբենական կատալոգ), 3) կարողանա ամեն մի պահանջած դեպքում պարզել, թե ինչպիսի, ինչ բովանդակության գրքեր կան գրադարանում (սիստեմատիկ կատալոգ), իսկ վերջինս չափազանց կարեոր և գրադարանը կոմպլեկտավորելու (գրքեր գնելու) և գրքեր բաց թողնելու համար այն դեպքում, յերբ ընթերցողը չի պահանջում այս կամ այն գիրքը, այլ պահանջում ե, որինակը մի վորմե գիրք այս կամ այն խնդրի շուրջը:

4) Բացի այս գրադարանային տեխնիկայի միջոցով հաշվառման են յենթերկվում ընթերցանության համար բաց թողած գրքերն այնպիսի կարգով, վոր



ԿԸՀ 120 ՏԱ



24449-59

Հրատ. № 1091

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՑԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՑԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրտո. № 2231(բ)

Տիրաժ 1000

Գատվ. № 1066

ամեն մի բոլք հնարավոր լինի պարզել և այն, թե  
ում մոտ ինչդիրք կա, և այն, թե այս կամ այն դիրքն  
ում մոտ և դանշում և լիրը և վերադարձվելու (բա-  
ժանորդագրության ձև—բաժանորդի և դրքի փոր-  
մուլյարներ):

Այսպիսով, գրադարանային տեխնիկան ընդգըր-  
կում և դրքի վրա կատարած աշխատանքները—սկսած  
դիրքն ստանալու բովելից մինչև այդ դրքի անդեմքա-  
նալու պատճառով ինվենտար մատյանից դուրս գրելը:

Ինքնին հասկանալի լի, վոր գորքան մեծ և գրա-  
դարանը (թե զբերի և թե ընթերցողների թվով),  
այնքան բարդ պետք է լինի նրա տեխնիկան, և հա-  
կառակը, վորքան փոքր և գրադարանը, այնքան պարզ  
և նրա տեխնիկան: Սակայն գրադարանային տեխնի-  
կաի հիմունքները թե մեծ և թե փոքր գրադարան-  
ների համար ընդհանուր են: Սրանում և կայանում  
այն մեծ առավելությունը, վոր փոքր գրադարանների  
սեծանալու դեպքում կարիք չի լինելու վոչչացնել—  
վերակազմել գորություն ունեցող տեխնիկան, այլ հար-  
կավոր կլինի միմիախն նրբացնել և բարդացնել, և այն  
չափով, ինչ չափով մեծանում է գրադարանը և ավելա-  
նում՝ գրադարանին ներկայացվող պահանջները:

Գրադարանային տեխնիկան կդառնա միանդա-  
մայն ավելորդ ձևականություն, չեթե վերջինս չի հա-  
մապատասխանում տվյալ գրադարանի մեծությանը,  
կատարած աշխատանքներին և այլն:

Ծեթե, որինակ, մի վորեկ գյուղական գրադարա-  
նում մացվի քաղաքացին տիպի մեծ գրադարանի տեխ-  
նիկա, այս գեպքում այդ տեխնիկան կդառնա վոչ թե  
այլակ գրադարանի աշխատանքները ձևակերպող ուժան-

դակ միջոց, այլ մի ավելորդ բեռ և միանգամայն ա-  
վելորդ և անիմաստ ձևականություն:

Գրադարանային տեխնիկան բաժանվում և մի  
շաբաթ պարզ գործողությունների, վորոնց կատարելը  
(բացի գրքերի ինդեքսավորելը, վորը պետք ե կատա-  
րի ինքը գրադարանապետը) չի պահանջում հատուկ  
պատրաստականությունն և միշտ կարելի լի հանձնա-  
րարել գրադարանի ակտիվ բաժանորդներից կամ «գրա-  
դարանի և գրքի բարեկամների» խմբակի անդամներից  
վորեւ մեկին, ի՞արկե գրադարանապետի անմիջական  
հսկողությամբ և պատասխանավորությամբ (կատարած  
աշխատանքը վերջում գրադարանապետը պետք ե ան-  
պայման ստուգի):

Այդ գործողությունները, վորոնք անհրաժեշտ են  
նաև փոքր (մինչև 2000 կտոր գիրք ունեցող) գրա-  
դարանների համար, հետևալաներն են, և նրանց իմա-  
նալն ամեն մի գրադարանապետի և խօճիթվարի  
համար պարտադիր ե:

## I. ՆՈՐ ԳՐՔԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Յերբ գրադարանը նոր գիրք և ստանում, գրա-  
դարանի վարչիը գրադարանի խորհրդի անդամի հետ  
միասին բաց են անում զբերի կապոցը և ստուգում  
այն փաստաթղթի հետ, վորով ստացվել են զբերը:

Յեթե զբերը համապատասխանում են փաստա-  
թղթին, այս գեպքում ստանալու մասին փաստաթղթ-  
թի վրա համապատասխան նշան և արվում «Ստաց-  
ված և 4/II—1929թ. № . . (ինվենտար մատյանի հեր-  
թական համարները, վորոնց տակ գրանցվել են այդ զըր-

քերը մատյանի մեջ)։—գլուխարանապետի և խորհրդի  
անդամի ստորագրություն (վորպեսզի ամեն մի ըստե  
հնարավոր լինի պարզել ստորագրողների ազգանուն-  
ները, բացի ստորագրությունից գրադարանային ամեն  
մի փաստաթղթի վրա պետք եւ փակագծի մեջ գրվե  
նաև ստորագրողների անունը և ազգանունը):

Իսկ յեթե պակաս, ավել կամ դեֆեկտավոր (ա-  
րտապար) գրքեր են ստացվել, այս դեպքում գրադա-  
րանապետը խորհրդի անդամի հետ միասին այդ մա-  
սին կաղմում են համապատասխան արձանագրություն  
և ուղարկում այն հիմնարկությանը, վորտեղից ստաց-  
վել են գրքերը։ Արձանագրության պատճենը թող-  
նում են գրադարանում):

(Նմուշ № 1)

Արձանագրություն № . . .

1929 թ. փետրվարի 4-ին ստացվել ե . . .  
կտոր գիրք. համեստելով ուղարկած № . . .  
4/II-29 թ. փաստաթղթի հետ՝ գտանք հետեւյալ  
անհամապատասխանությունը՝

Պակաս են՝ 1. Խ. Յերիցյան—Կաթնատնտեսու-  
թյան գործնական ձեռնարկ—1 գիրք,  
1 ռ. 50 կ.

2. Շաղունց Ա.—Մեր անելիքները—  
1 գիրք, 20 կոպեկ.

Ավել և ուղարկած՝ 1. Արագի Տրակտորը—  
1 գիրք, 15 կոպեկ.

2. Թումանյան Մ.—Շարքացանը և  
նրա նշանակությունը—1 դ., 15 կ.

Դեֆեկտավոր են՝ 1. Մ. Խանգաղյան—Մեղվաբու-  
թյան գործնական ձեռնարկ—60 կ.—  
դրսի շապիկը չկա, գրքի միջից 1 նկար  
և պոկված (ցուց տալ՝ վոր եջի վրա-  
վի նկարն և պոկված) և ալին:

1. Այս-ինչ (ցուց տալ՝ վոր շրջանի, գյուղի)՝  
գրադարանի վարիչ՝ (ստորագրություն)

Այս-ինչ (ցուց տալ՝ վոր շրջանի, գյուղի)՝ գրա-  
դարանի խորհրդի անդամ՝ (ստորագրություն):

## II. ԳՐՔԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԸ

1. Գրքերի կնքելը—Վորպեսզի 2 տարբեր գրա-  
դարաններից վերցրած գրքերը չխառնվեն և առնասա-  
րակ վորպեսզի չկորչեն և չյուրացվեն գրադարանների  
գրքերը զանազան անբարեխիղճ ընթերցողների կող-  
մից, յուրաքանչյուր գրքի վրա դրվում և տվյալ գրա-  
դարանի կնիքը:

Գրքը կնքվում ե 3 տեղից՝

Սուածինը—գրքի ներսի շապկի (տիտղոսաթեր-  
թի) վրա (այն թերթը, վորտեղ գտնվում են հեղինա-  
կի ազգանունը և գրքի վերնագիրը) վորպես գրքի  
առաջին եջ: Կնքել խնամքով և չկհղտոտել շապկի  
վրայի տողերը:

Եերկրորդ—գրքի 17-րդ եջի վրա, վորպես գրքի  
յերկրորդ մասունքի առաջին եջ: Կնքել ներքենի աջ ան-  
կունից արևակես, վորպեսզի կնիքը կաչի ցածի 1 կամ  
2 տողի:

Եերրորդ—գրքի աեքստի վերջին եջի վրա,

Իսկ յեթե գիրքը պատկերազրդ եւ և ունի գե-

գիշիկ նկարնելու և քարտեզներ (առանձին թերթերի վրա), նաև լուրջարաննշուր նկարի և գարտեղի վրա: Անկախ կոնֆելուց՝ գրքի յուրաքանչյուր նկարը, քաբուղը համարակաքում են, և գրքի կազմի ներսի կողմից գրվում են դժունց թիվը, և ամեն անդամ գիրքն ընթերցանության համար դուրս տալու և վերադարձնելու ժամանակ ստուգվում են նկարների և քարտեղների:

Վարպետ կանոն պետք է հիշել, վոր այն բոլոր գրքերը, վորոնք չունեն գրքի ներսի շապիկը, 17-րդ եջը և վերջին եջը, պատկանում են այս կամ այն գրադարանին:

աղջ սպասում է գլուխութիւնը

առաջնային առաջնորդությունը առաջնորդությունը առաջնորդությունը առաջնորդությունը



Թրադարանային կոփքների տեսակները (իսկական մեծությամբ):

Ցուրաքանչյուր գրադարան (խրճիթ-ընթերցարան) պետք է ունենա իր կոփքը, իսկ այն գրադարանները, վորոնք իրենց առանձին կոփքը չունեն, կարող են ոգտվել համապատասխան հիմնարկության կոփքով (գյուղաբնորդի, ակումբի, զորձարտեղի և այլն):

2. Գրքերի կասով քիկացիան: — Ծառ հաճախ



գրադարանից պահանջում են վաչառի այնպիսի գրքերը՝ պահանջում են, թե այս կամ այնա խնդրվում է գրքի գործադրությունությունից ունեցու: այս մասուցուածու և ուղարկուածու պահանջում ուղարկած է գործադրությունությունից ունեցու: այս մասուցուածու և ուղարկուածու պահանջում է գրքի գործադրությունից ունեցու:

Այս այս հարցին պատասխանելու համար և պահանջած գրականությունը ցուցվուած համար լուրջ ուժանշյուր գրադարան պետք է կարգավորված վիճինի այնպես, գորպիսի ամեն մի գիտության վկրագրելու բարականությունը կենարժնացած վիճինի միակ կամ, գրադարանային կողմից ասած, պետք է գրադարանի գրքերը գասագարակած լինեն սիստեմատիկորեն:

Գրադարանները կարգավորելու համար գոյություն ունեն բազմաթիվ սիստեմները սակայն այդ սիստեմներից ամենաառանձիւն գրքական կամասի կացիայի (գեցիկալ) սիստեմն եւ նման վահագությունը պահպան կատարելու համար կորպորատիվական սիստեմը, գորպիսի այս սիստեմով կոփքը կարգավորելու (ինքնավարելիութենք ուղագում ևնք սովորական տասնորդական կոտարակներից (Տասնորդական սիստեմը, ինչպես կտեսնենք, շատ նման է մետրական չափերին):

Համաձայն տասնորդական սիստեմի՝ մարգիկային գիտելիքները բաժանվում են 10 հիմնական բաժիններ՝ 0, 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, և 9, յուրաքանչյուր բաժին իր ընկած հերթին բաժանվում է 10 մելթարաժնի, Առողջապահությունը իրենցուր յենթարաժին՝ 10 սորտարաժնի և այլն առ Փոքր, մինչև 2 հազար կոտրպիրք ունեցող գրադարանների համար միանգամայն բավական և ունեցած դրական բաժանմել առաջին 10 հիմնական բաժին-

Ների՝ միքանի ստորաբաժանումներով։ Միջակ, 2-ից մինչև 6 հազար կտոր գիրք ունեցող գրադարանները փոքր գրադարանների համար տված ստորաբաժանումներով, իհարկե, բավարարվել չեն կարող, այդ պատճառվ ել այս ձեռնարկում տասնորդական սիստեմի յերկու աղյուսակ ե կազմված, վորոնցից առաջինը (միմիայն խոշոր շրիֆտով տպագրված աղյուսակը) պարզացրած և հարմարեցրած ե փոքր գրադարանների համար, իսկ յերկրորդը (թե խոշը և թե մանր շրիֆտով տպագրված աղյուսակը) ավելի բարդ—միջակ գրադարանների համար (տես տասնորդական կլասսիֆիկացիայի աղյուսակները գրքույկիս վերջում),

3. Հեղինակային նօտեն։—Գրքերն ըստ բաժինների բաշխելուց հետո, վորպեսզի ցանկացած գիրքը հեշտ կարելի լինի գտնել, հարկավոր ե տուրաքանչյուր բաժնի մեջ գրքերը դասավորել ալբուրենական կարգով։ Այս նպատակով ամեն մի գրքի վրա բացի բաժինը ցուց տվող թվանշանից, գրքում ե նաև հեղինակի ազգանվան առաջին տառը և նրան համապատասխանող թվանշանը համաձայն հեղինակային աղյուսակի (հեղինակային նշան)։

Հեղինակային նշանը հեղինակի ազգանվան սկզբնատառն ե այն թվանշանի հետ միասին, վորին համապատասխանում ե տվյալ հեղինակի ազգանվան առաջին վանկը համաձայն հեղինակույին աղյուսակի։ (տես Ա. Հովհաննեսի հեղինակային աղյուսակ, § 1)։

4. Ենթեմս յեվ օփեր։—Գրքերը դասավորելիս (համաձայն տասնորդական սիստեմի), ինչպես վերն ասացինք, հարկավոր ե վորոշել, թե վոր բաժնին ե

պատկանում այդ գիրքը—որինակ՝ Թումանյան—Շարքացանը և նրա նշանակությունը։ Ինչպես տեսնում ենք, այդ գիրքը պատկանում է զյուղատնտեսական բաժնին—63. ին։

Այս 63 թվանշանը ցուց ե տալիս տվյալ գրքի բաժինը, վորը գրադարանային լեզվով կոչվում ե թեզեմ։

Հեղինակային նշանը—թ—88։

Եթերը, վորը իրենից ներկայացնում ե մի անպիսի կոտորակ, վորի համարիչը գրքի ինդեքսն ե, իսկ հայտարարը հեղինակային նշանը, կլինի՝ <sup>63</sup>թ—88

5. Գրքի յառլիկ յեվ գրպան։—Յուրաքանչյուր գրքի վրա շիֆրը գրվում է 2 տեղ՝ մեկը գրքի ներսի շապկի վերեկի ձախ անկյունում, իսկ մյուսը՝ յառլիկի վրա, վորը փակցվում ե գրքի կազմի նույնպես վերեկի ձախ անկյունում։

Գրքի կազմի ներսի կողմից կպցնում են նաև այսպես կոչված գրի գրպան։


Գրքի գրպանը մի փոքրիկ թերթիկ ե, վորի վրա տպագրված ե։ «Գիրքը վերադրեած վոչ ուշ ցույց տված ժամկետից» և գծված ե 40 քառակուսի։ այս քառակուսիների մեջ հերթով գրվում ե ընթերցանության համար գուրս տված գրքերի վերադրձման ժամկետը և ամեն անգամ գիրքը վերադրձնելուց հետո թանաքով կամ քիմիական մատիտով գիծ ե քաշվում ժամկետի վրա, և հաջորդ անգամ նույն գիրքը տուն տալիս հաջորդ քառակուսու մեջ նոր ժամկետն ե գրվում։

Բացի այս գրպանը գրքի կազմին այնպիս ե

կողվում, վորպեսզի վերևի կողմն ազատ լինի, և կարե-  
մի լինի տեղափորել տվյալ գրքի Փորմուլյարը (այս  
ժաման տես կետ. 10):

Գրպանը կարելի յե կպցնել ալյուրից պատրա-  
տած սովորական շրեշով կամ գումմիարաբիկով:

ԳՐԱԾ ՎԵՐԱԿՄԱՐՁՐԵՔ ԿՈՉ ՈՒՇ ՑՈՒՅՑ ՏՎԱԾ ԺԱՄԿԵՏԻՑ	
10/5	
5/7	
17/5	
1/11	



### Դրեի գրպանը (Փոքրացրած):

**6. Ինվենտար մասյան:**—Գրադարանի բոլոր գըր-  
քերը պետք ե անպայման ցուցակագրված լինեն ին-  
վենտար մատյանում: Ամեն մի նոր ստացված գրքի  
շիֆրը գրելուց հետո անձիջապես պետք ե մուծել ին-  
վենտար մատյանի մեջ (որինակը տես գրքի վերջում):

Վորովհետեւ ինվենտար մատյանը գրադարանի  
գրքերն ստուգելու ամենակարենոր փաստաթուղթն ե,  
այդ պատճառով ել նա պետք ե լինի՝ կազմած, թեր-  
թերը հաշված, համարակալած, կանեփի թելով

կապած և համապատասխան մարմել կնիքով կնքած  
(անպայման զմուռով):

Մատյանից թերթեր պոկել գոչ մի դեպքում չի  
կարելի, իսկ լեթե մի վորեն եջ այս կամ այն պատ-  
ճառով փշացել ե (որինակ սխալմամբ միենուն գըր-  
քերը շ անգամ են գրվել), այս դեպքում հարկավոր ե  
այդ եջը գծել կարմիր թանաքով և այդ մասին նույն  
եջի վրա գրել համապատասխան ծանոթությունն  
չի թույլատրվում նաև դանակով կամ ուետինով քե-  
րել, մաքրել և կամ զտնագան չնշումներ կատարել:

Ինվենտար մատյանն ունի հետևյալ սյունյակնե-  
րը, վորոնք ամեն մի գրադարան անկախ իր մեծու-  
թյունից պետք ե անպայման լցնի, և առնասարակ  
ինվենտար մատյանի բոլոր կանոնները բոլոր տեսա-  
կի գրադարանների համար ընդհանուր են և պարտա-  
դիր:

1. Գիրքն ստանալու ամիսը, թիվը և տարին. յե-  
թե միանդամից ստացվել են միքանի գիրք, անհրա-  
ժեշտ չե, վոր ամեն մի գրքի դիմաց գրվի ամսաթիվը.  
բավական և միմիայն առաջին գրքի ամսաթիվը նշա-  
նակել իսկ մնացածների համար գիծ քաշել:

2. Ինվենտար № № (համարները գրվում են ըստ  
կարգի):

3. Շիֆրը (ինդեքս և հեղինակացին նշան):

4. Հեղինակ (յեթե զիրքը հեղինակ չունի, այս  
սլունակը չի լրացվում). Ժուրնալների նկատմամբ հե-  
ղինակի սլունակում գրել «Ժուրնալ» բառը:

5. Գրքի վերնագիրը:

6. Հրատարակություն (վմբերորդ հրատարա-  
կությունին եւ:

7. Ո՞ւմ հրատարակությունն եւ կվերտեղ եւ հրատարակել:

8. Հրատարակության տարեթիվը:

9. Ձեռք եւ բերված (ումնից և ինչ փաստաթղթով և ստացված, փաստաթղթի հ-ը):

10. Փաստաթղթի թվականը:

11. Գրքի գինը:

12. Գիրքը կազմած եթե վոչ (յեթե կազմած եւ, դրվում եւ կազմի գինը, իսկ յեթե վոչ, սկսնյակն աղատ եթողնվում):

Ինվենտար մատյանը լրացնելիս պետք ե գիտենալ և կատարել հետևյալ կանոնները.

1. Ամեն մի գիրք (լինի դա մի թանգարժեք գիրք թե 4 եջանոց մի բրոցուր) և ամեն մի ամսագիր ինվենտար մատյան գրանցելիս ստանում են իրենց առանձին համարը, և այդ համարը գրվում է գրքի ներսի շապկի և 17-րդ եջի վրա:

2. Ամեն մի գիրք ինվենտար մատյանում պետք ե զբաղեցնի միմիայն մեկ տող. յեթե գրքի վերնագիրը չի կարելի ամբողջությամբ տեղափորել մեկ տողում, վերջինս կարելի յե կրճատել, սակայն այնպես, վորպեսզի հնարավոր լինի հասկանալ բառերը:

3. Այն բոլոր գրքերը, վորոնց գինը չի գրված գրքի վրա և կամ գրված ե ոտզմական կոմմունիզմի շրջանի թղթադրամներով և ոտարերկրյա դրամներով, գրադարանապետը պետք ե պարզի նրանց գինը մեր ալժմյան գրամով և լուրաքանչյուր այլպիսի գրքի գինը նշանակի ինվենտար մատյանում:

4. Ինվենտար մատյանում ամեն մի գիրք գըրվում ե առանձին համարի տակ, անկախ նրանից, թե

այդ գիրքը կարող ե լինել միքանի հատորանոց. որինակ Շահումյան—Յերկերի ժողովածու, հատոր I, 11. այս 2 հատորներից ամեն մեկն առանձին-առանձին ինվենտար մատյանում ստանում են իրենց համարները և գրվում առանձին տողի վրա. նույնպես պետք ե վարփել նաև այն ժամանակ, յերբ միենույն գրքից ստացվում է միքանի որինուկ: Կարճ ասած՝ ինվենտար մատյան մուծելիս հաշվի պետք ե առնել վոչ թե գրքերի տեսակը, այլ նրանց քանակը և ամեն մի կտոր գրքին պետք ե տալ առանձին համար:

7. Այբուբենական յեկ սիստեմատիկ կառավագեն, եանձնարարական ցուցակ:

Կառավագեն ասելով հասկանում ենք մի այնպիսի զբացուցակ, վորում գրքերը դասավորված են վորոշ կարգով, և վորով ընթերցողը ջոկում և պահանջում ե իր ցանկացած գիրքը:

Ցուրաքանչյուր մասսայական գրադարան պետք ե ունենա 2 տեսակի կառավագեն՝ մեկը սիստեմատիկ, մյուսը այբուբենական:

Այբուբենական կառավագեն:—Վորովհետեւ շատ հաճախ ընթերցողը գրադարանին պահանջ ե ներկայացնում ցուց տալով ցանկացած գրքի հեղինակի ազգանունը և վերնագիրը, կամ պահանջում ե վորոշ հեղինակի գրական գործերն առնասարակ (որինակ՝ «Զարենցից ինչ ունեք»), ուստի և նման դեպքերում պահանջված գիրքը շուտ գտնելու համար լուրաքանչյուր գրադարան պետք ե ունենա այբուբենական կառավագեն—այսինքն հատուկ թերթիկներից (բլոկքարտ) կամ քարտերից կազմած գրքերի այնպիսի ցուցակ, վորում քարտերը դասավորված են հեղինակների ազգանունների այբուբենական կարգով:

Սիստեմատիկ կառալով: — Յերբ ընթերցողը պահանջում է վոչ թե այս կամ այն գիրքը, այլ ցուց և տալիս միմիան, թե ինչ բովանդակության զրգեր են այս ցանկանում, որինակ՝ «գրուղատնտեսության կամ թոքախտի մասին թնջղիսի զրգեր կան գրադարանում», ահա արսպիսի պահանջ կատարելու համար յուրաքանչյուր զրադարան պետք է ունենա սիստեմատիկ կատալոգ (ըստ բովանդակության դասավորված):

Հաջանարարական ցուցակ: Մեր մասսայական գրադարանների ընթերցողը գեր ծանոթ չե կատալոգին. նա զժվարությամբ կգտնի իր ցանկացած գիրքը, իսկ շատ հաճախ յերկար փնտուելուց հետո կիրցնի առաջին պատահած գիրքը: Ահա նման ընթերցողին ոգնելու համար գոյություն ունի կատալոգի մի փորոշ տեսակ, վորը կոչվում է հանձնարարական ցուցակ:

Այս ցուցակում տրվում են համառոտ տեղեկություններ նոր սահմանական կամ այս կամ այն ինդիք շուրջը նոր լույս տեսած և գրադարանում ունեցած զրգերի մասին: Հանձնարարական ցուցակներում պետք է զրգեն այն բարոր տեղեկությունները, վորոնք դրվում են սովորական կատալոգում (տես կետ 8) և պրան և վելացրած զրքի համառոտ բովանդակությունը:

Մեծ նշանակություն ունեն հանձնարարական ցուցակներն առհասարակ ընթերցողների: Ընթերցանությունը ղեկավարելու դորձում վորպես մեթոդ, մասնավանդ վորոշ կամպանիաների ժամանակ, յերբ այդ ցուցակների միջոցով լայն մասսաներն իրագեկ են դասնում ավալ խնդրի շուրջը մեղած գրականության մասին:

Յ. Պարտ գրելը: — Կատալոգ կազմելու համար լուշ

բարանչյուր գրքին գրվում է Զ քարտ—մեկը ալբուբնական, իսկ մյուսը սիստեմատիկ կատալոգի համար:

Դրություն ունեն յերկու տեսակի քարտեր՝ մեկը կարտոնից պատրաստած քարտեր ( $7\frac{1}{2} \times 12\frac{1}{2}$  սմ), իսկ մյուսը, այսպիս կոչված բլոկ-թերթիկ (բլոկ-նոտային կատալոգ): Մեր պայմաններում մասսայական զրադարանների համար ավելի հարմար է ունենալ բլոկ-նոտալին կատալոգներ:


Դրա համար վերցնում են սովորական դիմում գրելու համար գործածվող գծած թուղթը և բաժանում 6 հավասար մասերի, և յուղաքանչյուր մասի (թերթիկի) վրա գրում են ներսի շապիկի (տիտղոսաթերթի) վրա զրադիմում հետեւկությունները հետևյալ կարգով:

Առաջին տողի վրա գրվում է հեղինակի ազգանունը՝ և անունը (անունը պետք է գրել միշտ ազգանունից հետո և անպայման ուղղական հոլովով), իսկ յեթի զերը հեղինակ չունի առաջին տողի վրա զըրդում ե գրքի վերնագրի առաջին բառը և հեղինակին նշանի համար վերցվում է ալիք բառի առաջին տառը: Յերկրորդ տողի վրա գրվում են գրքի վերնագիրը և ինթավերնագիրը (մասպայման լրիվ՝ գոչ մի կրծատումներ չանելու Յեթե վերնագիրը չի կարելի տեղավորել մի տողի վրա, կարելի չե զբել լերը որորդ և ավելի յածը տողերի վրա):

Վերնագրից հետո (մի տող բաց թաղած) գրվում են գրքի հրատարակչության մասին տեղեկություններ (վերթվիճ, վերաբերյալ և այլ հրատարակել գիրքը, թարգմանություն, մասնակի պատճեն, պատճենագիր, թարգմանչի ազգանունը և ազգանունը, Այնուհետև թերթի



վերևի աջ անկունում գրվում է շիֆրը և կարի մոտ  
(տես նմուշը)՝ ինվենտար համարը:



Կարի տեղերը

Բարեկամ (փոքրացրած):

Թերթիկը պետք է գրել անպայման թանաքով,  
թանաքը թողնել, վոր ինքնիրեն չորանա, ծծողակա-  
նով չչորացնել: Այս թերթիկներից ալբուբենական  
կատալոգ կազմելու համար հարկավոր է վերցը-  
նել գրադարանի բոլոր գրքերի համար գրած թեր-  
թիկներից մեկական որինակ և առանց հաշվի առնե-  
լու ինդեքսները՝ զասավորել այն համաձայն հեղինա-  
կացին նշանների այբուբենական կարգով: Միանման  
տառով սկսվող թերթիկներն իմի հավաքել և կարել

միասին և ամեն անդամ, լերք նոր գիրք և ստացվում,  
հարկավոր է այդ գրքի թերթիկը մտցնել ալբուբե-  
նական կատալոգի մեջ՝ կարը քանդել, թերթիկը գնել  
համապատասխան տեղը և նորից կարել:

Ճիշտ նույնպես և կազմվում սիստեմատիկ կա-  
տալոգը, այն տարբերությամբ միմիայն, վոր պատեղ  
թերթիկներն առաջ բաժանվում են ըստ ստորաբա-  
ժանումների, բժշկականը (61) առանձին, գյուղատըն-  
տեսականը (63) առանձին, և ապա յուրաքանչյուր  
ստորաբաժանումի մեջ համաձայն հեղինակային նշան-  
ների ալբուբենական կարգ և մտցվում:

9. Գրագարանային նեռագիր: — Վորպեսպի ամեն  
մարդ, անգամ կիսագրագետը կարողանա հեշտությամբ  
կարդալ և իրեն ցանկացած գիրքն ընտրել, անհրա-  
ժեշտ ե, վոր քարտերը գրվեն մեծ խնամքով: Յուրա-  
քանչյուր տառ պետք է գրվի առանձին-առանձին,  
տառերը գրել միմյանցից վորոշ հեռավորությամբ,  
ավելորդ գծեր, նախշեր ընավ չափել և տառերը նը-  
մանեցնել տպագրական շրիֆտին:

Գրադարանային ձեռագրի պահանջած տառերը  
պետք է ունենան հետեւյալ ձևը, և ալբուբենական  
կարգը:

Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Ը, Թ, Ժ, Ի, Լ, Խ, Ծ, Կ,  
Յ, Ջ, Ռ, Ձ, Մ, Յ, Ն, Ծ, Ռ, ՌԻ, Ջ, Պ, Զ, Ռ, Ս,  
Վ, Տ, Շ, Փ, Բ, Ֆ,

10. Գրքի օռմուլյար: — Բացի լերկու որինակ  
թերթիկներից, վոր հարկավոր են ալբուբենական և

սիստեմատիկ կատալոգների համար, յաւրաքանչյուր գրքին գրվում ե նաև մեկ հոտ գրքի Փորմուլար: Ֆորմուլարի վրա գրվում ե շիֆրը, ինվենտար համարը, հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը առանց յենթավերնագրի (իեթե վերնագիրը իերկար ե, կարելի է վերջինս կրճատել փորպես մի տողի վրա հնարավոր լինի տեղավորել):

37		N135	Առաջնային գործություն և նորոգություն
L-36	ԼԵՆԻՆ		
10/8	Խ3		
23/5	Խ7		
3/11	Խ4		
20/6	Խ12		

Դրեի Փորմուլար (Փոքրացրած):  
այս Փորմուլարներից կազմում ե յերրորդ տեսակի կատալոգ (շարժական կատալոգ), վորի միջոցով ամեն մի բուգե կարելի յե իմանալ, թե իերբափետք ե վերադարձվի այս կամ այն գիրքը և ում մոտ ե դանվում նու:

Ֆորմուլյարի առաջին սյունյակում գրվում ե վերադարձան ժամկետը (անպարման վերադարձան ժամկետը և վոչ մի գեղքում գիրքը բաց թողնելու որը), իսկ յերկրորդ սյունյակում՝ այն բաժանորդի (ընթերցողի) համարը, ում մոտ վորդունվում է գիրքը: Այսպիսով այս Փորմուլարների միջոցով (շարժական կատալոգ) ամեն մի բուգե կարելի է իմանալ՝ 1) այս կամ այն գիրքը ում մոտ ե, և յերբ ե լրանում վերադարձան ժամկետը, և 2) քանի գիրք և դուրս տված, և ինչ գրքեր են նրանք:

Յերբ գիրքը վերադարձվում ե, տվյալ գրքի Փորմուլարը շարժական կատալոգից գուրս և հանվում և տեղափորվում գրքի գրպանի մեջ:

11. Գրեթեի զասավորումք:—Յերբ գիրքը կընքված ե, շիֆրավորված, ինվենտար մատյան և անցկացրած, լառիկ և գրպան և կացրած, լուրաքանչյուր գրքին 2 բլոկ թերթիկ ե գրված, և վերջապես գրքի Փորմուլար ե գրված, դա նշանակում ե, վոր գիրքը գրադարանորեն վերամշակված ե և կարող ե դասավորվել պահարաններում: Պահարանում գրքերը դասավորվում են այնպիս, ինչպես դասավորվում են թերթիկները սիստեմատիկ կատալոգում՝ ըստ բաժինների և յուրաքանչյուր բաժնի մեջ այբուրենական կարգով:

Բաժիններն իրենց հերթին պետք ե դասավորվեն ինդեքսների աճման (մեծանալու) սկզբունքով, այսինքն առաջ պետք ե տեղափորել փոքր թիվ (ինգեք) ունեցող բաժիններ և աստիճանաբար թվերի մեծանալու հետ միասին դասավորել բաժինների գըրքերը:

Վորպեսպի հեշտությամբ գուրս հանվի դարակից

ցանկացած գիրքը, գրքերը պետք եւ դասավորվեն պահարաններում վոչ թե միմյանց վրա, այլ կողք-կողքի, կողերը դեպի դուրս, աջից ձախ և վերևից դեպի ցած:

Գրքերը վայր չընկնելու համար դարակները պետք եւ լինեն մոտ 25 սանտիմետր խորությամբ. հեշտ գտնելու համար բաժինները հարկավոր եւ միմյանցից բաժանել սովորական կարտոնով: Կարտոնը պետք եւ դնել լորկու բաժինների միջև այնպես, վորապեսզի ծալը կողքից միքիչ դուրս մնա: Այդ դուրս մնացող մասի վրա կպցվում եւ յառլիկ, վորի վրա գըրվում եւ հաջորդ բաժնի ինդեքսը, վորով և բաժանվում են միմանցից բաժինները:

Վորովնետե մասսայական գրականության ցուցագրումը գիրքը մասային մոտեցնելու խնդրում ունի չափազանց մեծ նշանակություն, ցանկալի լի, վորապեսզի ամեն սի գրադարան ունենա հատուկ վահան (անտ), վորի վրա նախքան գրքերի դարակավորելը դասավորվի ամբողջ նոր ստացած գրականությունը այնպես, վոր ամեն մի ընթերցող կարողանա տեսնել թե ինչ նոր գիրք եւ ստացել գրադարանը:

### III. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ԱՐՈՆԵՄԵՆՏ)

**1. Ընդհանուր կանոններ:**— Այն բոլոր ընթերցողները, վորոնք գրվում են գրադարանից գիրք ստանալու համար, դրանով իսկ մտնում են այդ գրադարանի հետ վորոշ պայմանագրային հարաբերությունների մեջ, վորը պարտավորեցնում է նրանց ինթարկվել գրադարանի կանոններին:

Որենքով ամեն մի գրադարան իրավունք ունի ամեն մի ընթերցողից դատարանի միջոցով դանձելու չվերադարձված գրքի արժեքը: Իհարկե, դատարանի միջոցով ընթերցողից գրադարանի գիրքը պահանջելը (կամ նրա գինը գանձելը) վերջին միջոցն եւ, վորին գրադարանը պետք եւ հազվագյուտ դեպքերում դիմի: Սրա փոխարեն գրադարանային տեխնիկան, մասնավորապես բաժանորդագրության ապագարատն այնպես պետք եւ կազմակերպվի, վորպեսզի ամեն մի ընթերցող զգա, վոր գրադարանն իրեն վերցրած գրքի վրա ունի անընդհատ հսկողություն, իսկ այս հըսկողությունն ընթերցողին հանդեպ գրադարանի գրքերը կողմանցի ճշտապահության:

**2. Ընթերցողի Փորմուլա:**— Ամեն մի գիրք, վորը դուրս եւ արվում կարդալու համար, պետք երվի այն անձնավորության վրա, վորը վերցնում եւ այդ գիրքը: Սրա համար գրադարանը պետք եւ ունենա հատուկ քարտեր, վորոնք կոչվում են ընթերցողի ֆորմուլա, և վորի մեջ նշանակվում են հերթով ընթերցողի վերցրած բոլոր գրքերը (Փորմուլյարի որինակը բերված երքի վերջում):

Այն գրադարանները, վորոնք չունեն այդ ֆորմուլյարները, պետք եւ առանձին տետրի մեջ ամեն մի ընթերցողի (բաժանորդի) համար առանձին թերթ բաց անեն և հերթով նրա մեջ գրեն բոլոր դուրս արվող գրքերը: Սակայն տետրի սիստեմն ունի մի շարք անհարմարություններ, ուստի գրադարաններն առաջին հարավոր դեպքում պետք եւ վերջինս փոխարինեն ընթերցողի ֆորմուլյարով:

Ընթերցողի ֆորմուլարի մի յերեսը (առաջին)

պարունակում կ իր մեջ միշտ առ անկետարին հարցեր, վորոնց լիսցնելուց և գրադարանի հանոնների հետ ծանոթանալու հետո դրադարանապետը և ընթերցողն պարզութեամբ հոգվետվութիւն ժամանակ դժվարությունների չհանդիպի ընթերցողների սոցիալական գործարքան և ափեղեկությունների մասին նախորդութեատքուն պարզեցաւ կ քարտի վերեխ, և աջանակութեատքի վերեխ, և աջանակութեատքուն հետեւալ բայթիանական անշանները (հոմհական թվանշաններով) աւրաք և գագառ սոցիալայցը Բանվորներ և բանորակները ունի քրքիւրութեան ուղղադաշիւրաբանը առ բացառված ունի քա կարմիրութանակային և իրացց թվով նշանակութեատքը Մասնութեատքը:

**Տնտեսագործներ,** թոշակառուները և Զ և գագառ սոցիալայց ունի Ապահովության այլ առողջ և ապահով և սոցոր ցոյն և նաև Ապահովության այլ առողջ առողջապահութան մասին պահպասխակը (Ապահովության պահպասխանական անձնագիրը) նըրացվում և հետեւակա կերպով պատահած առ այլ Պահպահութեան անձնագիր օճառութեան մասին պահպասխանական անձնագիրը (Ապահովության պահպասխանական անձնագիրը) պահպասխան անձնագիրը պահպասխանական անձնագիրը (Ապահովության պահպասխանական անձնագիրը) պահպասխանական անձնագիրը պահպասխանական անձնագիրը:

Կեղինակի աղքանունը, իսկ վերադարձնելիս նույն գծի սյունյակում նշան և արդում վերադարձնելու ժամանուկը:

Բացի այս ամեն տնտեսմ գիրքն ընթերցանութեան համար դուրս տալիս նրանց Փորմուլաներից կաղմակում և շարժական կատարող (տես կետ 10):

Ապացուցված է, վոր գրադարանի գրքերը մեծ մասամբ կորչում են այն գեղքում, յերբ ուշացնելու գեպօւմ գրադարանը չի հիշեցնում ընթերցողին գրքի վերադարձնելու մասին, ուստի գրադարանապետը, շարժական կատարողը (վերցրած գրքերի Փորմուլաները) պետք է միասմի սուստի շաբաթն ամենապականը յերկու անգամ և ուշացնողներին բանավոր կերպով գդուշացնի ժամկեան անցնելու մասին:

Յերբ բանավոր գգուշացնելուց հետո ևս ընթերցողը չի վերադարձնում գիրքը, այս մասին գրադարանապետն իր հիշեցումը կատարում և գրավոր կերպով, իսկ յերկորդ գրավոր հիշեցումից հետո յեթե ընթերցողը չի վերադարձնում գիրքը, պետք է դիմել դատարան: (Հիշեցման ձեերը՝ տես եջ 26):


3. **Գրազարանից** ոգավելու օրինակելի կանոններ.

— Դրադարանից ոգտվելու համար գրադարանի խորհուրդը մշակում և վորոց կանոնները, վորը կպցնում են գրադարանի աշքի ընկնող տեղերից մեկում: Մասնական զրադարանների որինակելի կանոնները հետևյալներն են.

1. Դրադարանից ոգտվելու իրավունք ունեն ըուր քաղաքացիները, վորոնք բնակվում են գլուխում քաղաքում:

2. Գրքերը բաց են թողնվում որպես.

## I հիշեցման ձեվը




Քաղաքացի .....

Գրադարանը հիշեցնում է, վոր ձեր  
վերցրած (այս-ինչ) գրքի ժամկետը  
լրացել է 2/VIII 1929 թ.: Խնդրում եմ  
շտամպ վերադարձնել:

Գրադարանապետ՝ (ստորագրություն):

## II հիշեցման ձեվը



Քաղաքացի .....

Գրադարանը յերկրորդ անգամ հի-  
շեցնում է ձեզ, վոր ձեր վերցրած  
(այս-ինչ) գրքի ժամկետը լրացել է:  
Խնդրում եմ 3 որվա ընթացքում  
վերադարձնել, հակառակ դեպքում  
գրադարանն ստիպված կլինի դիմել  
դատարան՝ ձեզ համաձայն Քրեական  
Որենսգրքի հոդված 199-ի պատաս-  
խունատվության կանչելուհամար,  
Գրադարանապետ՝ (ստորագրություն):

Ժամկետը կարելի է յերկարացնել գիրքը ներկայաց-  
նելուց հետո, այն դեպքում միայն, լեթե նույն այդ  
գրքին ուրիշի կողմից պահանջ չի ներկայացվել:

3. Քաղաքացի կամ գուղից մեկնելու դեպքում  
գրքերը պետք ե անպայման վերադարձվեն:

4. Գրքերի հանձնումը յերրորդ անձերի, թեկուզ  
և գրադարանի բաժանորդագրին, խիստ արգելվում ե:

5. Գիրքը կորցնելու կամ փչացնելու դեպքում  
ընթերցողը պարտավոր ե վճարել գրքի գինը:

6. Գրադարանը բաց ե .....որերին  
ժամկետներում:

7. Յերկու գրավոր հիշեցումից հետո, լեթե ըն-  
թերցողը չվերադարձնի իր մոտ գտնված գիրքը, գրա-  
դարանը կարող ե նրան վորոշ ժամանակով զրկել գրա-  
դարանից ոգտվելու իրավունքից և հարկ յեղած դեպ-  
քում դատական պատասխանատվության լենթարկել:

8. Ընթերցարանում գտնվում ե բողոքի արկղ,  
ուր ընթերցողը կարող ե զցել իր բողոքները, դիտո-  
ղությունները, ցանկությունները և ալին:

9. Ամեն մի ընթերցող իր քարտի վրա ստորա-  
գրում ե այն մասին, վոր գրադարանի կանոններն  
երեն հայտնի լին, և գոր ինքը պարապորվում ե կա-  
տարել այդ կանոնները:

Թված կանոնները տեղական պայմաններին հարմա-  
րեցնելու ժամանակ պետք է աչքի առաջ ունենալ առաջին  
հերթին գիրքը և ընթերցողին միմլանց մոտեցնելու խըն-  
դիրը, և վոր մի դեպքում չսահմանել ախնակիսի խիստ կե-  
տեր և պատժական միջոցներ, վոր ընթերցադիրը վախե-  
նան և կտրվեն գրադարանից և գրքից, Գրքերի սւչացնե-  
լու և փչացնելու դեպքում առաջին հերթին պետք ե վոչ

թե պատժական միջոցների դիմել ալլ՝ պետք և ընթերցողների մեջ կատարել խոշոր դաստիարակչական աշխատանքներ՝ կազմակերպելով «գրքի և գրադարանի թշնամիների», «գրադարանային հանցագործների» և գրքի վաստառների վրա աղիտդատեր, գրքի և ընթերցանության յերեկոներ, հատուկ դասախոսություններ և այլն:

#### IV. ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Տարին մեկ անգամ այնպիսի ժամանակ, յերբ գրադարանը համեմատաբար այնքան ել չի ծանրաբեռնված աշխատանքներով (ամառը), հարկավոր և գրադարանը փակել-գրային գույքն ստուգելու համար դրքերի ստուգումը տեղի յե ունենում գրքերը համեմատության մեջ դնելով ինվենտար մատյանի և կատալոգների հետ:

Այս ստուգումը պետք է կատարել հետևյալ կերպ։ Առաջ համեմատվում և փոխադարձորեն ստուգվում են սիստեմատիկ և այրուբենական կատարգները, վորից հետո սիստեմատիկ կատարություն և դըրվում գրքերի և ինվենտար մատյանի հետ։ Վորպեսզի ստուգելու ժամանակ ինվենտար մատյանը չկեղացնել, դանաղան նշաններ, գծեր և ալլն չանել, հարկավոր և վերցնել մի մաքուր թերթ և վրան գրել այնքան համարներ, վորքան համարներ ունի ինվենտար մատյանը, և լուրացանչյուր գիրքն ստուգելիս համապատասխան համարը թերթի վրա չնշել։ Ստուգման վերջը յեթե թերթիկի վրա մնում են չշնչված համարներ, գա նշանակում ե՝ այդ համարների տակ գրանցված գրքերը պահան են։ Պահան գրքերի նկատմամբ

ստուգվում և շաբթական կտարարություն կարգավորվում է լիթե պրքի ֆորմուլյարն ել և կորել, դա նշանակում ե՝ պրադարանում տեղի յե ունեցել գրքերի գողություն։

Նման դեպքերում գրադարանը պետք է հետապնդի անպալման պարզելու, թե ինչ պալմաններում են կորել վերջինները, — գուցե դուրս և տված ընթերցելու համար և թուրիմացարար չի գրվել վոչ մի տեղ։

Համենայն դեպս լիթե կորած գրքերը Յ ամսվա ընթացքում չեն գտնվում, հրավիրվում և հատուկ հանձնաժողով, վորն ուսումնասիրելով գործի պայմանները, դուրս և գրում այդ գրքերը ինվենտար մատյանից՝ կազմելով համապատասխան արձանագրություն։

#### ԱՆՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Այս-ինչ) շրջանի, (այս-ինչ) գյուղի գրադարանի ինվենտար մատյանից գրքեր դուրս գրելու մասին,

15/V - 1929թ. ը. ը. Գրիգորյան Ա., Պետրոսյան Ն. և Պողոսյան Վ. բաղկացած հանձնաժողովը ստուգելով 1929թ. 15/Լից մինչև 15/V - 1929թ. գրադարանից (այս-ինչ պատճառով - ցույց տալ պատճառը) հեռացրած գրքերի փաստաթղթերը, վորոշեց - պատճառները համարել հարգելի (իսկ յեթե պատճառները չի համարվում հարգելի, ցույց ե տրվում, թե ում մեղքով կամ անփութությանը ե տեղի ունեցել գրքերի կորուստը, հետևապես և ումից պետք ե գանձել կորած գրքերի արժեքը) և հիշալ գրքերը դուրս գրել գրադարանային գույքից - ինվենտար մատյանի ԱՀ-ը (ցույց առ հեռացրած գրքերի համարները)։

(Սուրագուրյուններ)

Արձանագրությունը կազմելուց հետո ինվենտար մատյանի լուրաքանչյուր դուրս գրվող գրքի ծանոթության սլունյակում գրվում ե արձանագրության համարը (դուրս ե գրված արձ. № . . 15/№ 29թ.), իսկ արձանագրությունն արդարացուցիչ փաստաթղթերի հետ միասին պահպում ե հատուկ դորձի մեջ:

## V. ՇՐՋԻԿ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

